

**ԱՇԱԿԵՐՏԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ
ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՑԱՆԵԼԻՄ (միջին դպրոց)**

Ծ.Ա. Հասարայան

Մայրենի լեզուն մարդու հետ է միշտ
և նույնիսկ, երբ մարդ բոլորովին մենակ է:
Լևոն Շանթ

Բազմիցս արծարծվել և քննարկման թեմա է դարձել հանրակրթական դպրոցում մայրենի լեզվի ուսուցման, դասավանդման մեթոդների և հատկապես խոսքի մշակույթի հարցը:

Մերտեղ քերականական այս կամ այն օրինաչափությունը, չի նշանակում՝ ունենալ կապակցված բանավոր և գրավոր խոսք կառուցելու հնարավորություններ: Մայրենիի ուսուցիչը պարտավոր է աշակերտի մոտ կապակցված խոսք կառուցելու կարողությունները մշակել և վերածել հմտությունների:

Այսօր հանրակրթական դպրոցներում գործող հայոց լեզվի դասագրքերը սովորողի առաջ բացում են գիտելիքների և հմտությունների ձեռքբերման ու դրանց գործնական կիրառման նոր հնարավորություններ, քանի որ դասընթացի հիմնական նպատակադրումն աշակերտի բանավոր և գրավոր խոսքի հետագա զարգացումն է: Հայոց լեզվի ծրագրում զգալի տեղ է հատկացված աշակերտի խոսքի զարգացմանը, հատկապես 5-6-րդ դասարաններում երկու առարկաների միասնացված ուսուցումը նյութի յուրացումը գերազանցապես գործնական ճանապարհներով ապահովելու լայն հնարավորություններ է ընձեռում: Ուսուցիչը պետք է հնարավորինս գործադրի ավանդական և ժամանակակից ուսուցման մեթոդները սովորողի խոսքը, ակտիվ բառապաշարը, խոսքի մշակույթը զարգացնելու և հարստացնելու համար:

Բառապաշարի հարստացման հարցը հայոց լեզվի այն հիմնարար խնդիրներից մեկն է, որ սկսվում է առաջին դասարանից և շարունակվում մինչև դպրոցն ավարտելը:

Դասավանդվող բոլոր առարկաների ուսուցիչներն այս կամ այն չափով հարստացնում են սովորողների բառապաշարը, նպաստում նրանց խոսքի հղկմանն ու կատարելագործմանը: Սակայն այս առումով առանձնահատուկ է մայրենիի ուսուցչի դերը, որն իր կոռ, գեղեցիկ, անթերի, գրագետ խոսքով աշակերտներին ուղղորդում է կապակցված խոսք կազմելու:

Փորձենք համանունների ուսուցման օրինակով ներկայացնել դասավանդման այն միջոցներն ու եղանակները, որոնք կլսթանեն աշակերտի բառապաշարի հարստացմանը: Նշենք, որ հայոց լեզուն հարուստ է համանուններով, և արժե բացահայտել համանունների այն շարքերը, որոնք առավել հաճախ են հանդիպում խոսքակազմական գործընթացում:

Թեման ուսուցանվում է 6-րդ դասարանում, որին հատկացված է երկու դասաժամ: Համանուններին որոշ չափով աշակերտները ծանոթ են դեռ կրտսեր դպրոցից: Թեմայի ուսուցումը տարվում է գործնական ճանապարհով: Թեպետ համանունների մասին ծրագրային պահանջներ չկան, սակայն աշակերտների գիտակցությանն են հասցվում համանունների մասին ընդհանուր տեղեկություններ: Ուստի, նախքան նյութին անցնելը, անհրաժեշտ է գրույցի մեթոդով նախապատրաստական աշխատանք տանել՝ թեկուզ մի քանի րոպեում կրկնելով տարրական դասարաններում համանունների մասին աշակերտների ունեցած գիտելիքները, ի մի գումարելով իմացածը: Այնուհետև բացատրել համանուն բառի իմաստը՝ բառակազմական վերլուծության ենթարկելով: Այսպես, *համանուն* բառը կազմված է *համ* նախածանցից և *անուն* արմատից: Համ կոչվում է նույն, միևնույն, իսկ նույնանուն բառը կազմված է *նույն* և *անուն* արմատներից. հետևաբար ստացվում է, որ այս երկու բառերը նույն իմաստներն ունեն: Աշակերտների մոտ խառնաշփոթ չառաջացնելու համար նախապես պետք է բացատրել նաև, որ համանուն բառը շատ հաճախ փոխարինվում է նույնանուն բառով, այդ է պատճառը, որ որոշ հեղինակներ օգտագործում են հենց *նույնանուն* եզրույթը: Թերևս այդ բացատրությունից հետո միայն աշակերտները հեշտությամբ կընկալեն, որ լեզվի մեջ գործածվող այդ երկու բառերը նույնն են:

Այնուհետև պետք է անցնել համանունների առանձնահատկությունների բացահայտմանը: Բերում ենք համապատասխան մի շարք համանուններ, բացատրում դրանց իմաստները, աշակերտների ուշադրությունը հրավիրում բառերի ուղղագրությանը, հնչյունակազմին, որից հետո աշակերտների օգնությամբ ձևակերպում սահմանումը, այն պետք է լինի մատչելի, պարզ և ընկալելի աշակերտների համար: Սահմանումը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. համանուններ են կոչվում այն բառերը, որոնք ձևով՝ հնչյունական կազմով նույնն են, իմաստով՝ բոլորովին տարբեր. իրար հետ կապ չունեն: (1, 74)

Կամ՝ «Համանուններ են կոչվում երկու և ավելի այն բառերը, որոնք նույնն են գրությամբ (հնչյունական կազմով) կամ արտասանությամբ և տարբերվում են միայն իմաստաբանորեն կամ քերականորեն, կամ էլ և՛ իմաստաբանորեն, և՛ քերականորեն միաժամանակ»: (2, 115)

Դասագրքում թեման բավական հակիրճ է ներկայացվում՝ սահմանափակվելով միայն սահմանումով և օրինակներով: Ուսուցիչը, կարևորելով թեմայի առանձնահատկությունը, պետք է ծավալվի, շատ մանրակրկիտ ու դյուրըմբռնելի բացատրի համանունության երևույթը լեզվում. համանունների շարքերը, նրանց դասակարգումն ըստ հնչման և գրության նույնության: Կարևոր է նաև համանուն բառերի իմաստների բացատրությունը: Աշակերտների համար ավելի դժվար կլինի որպես առանձին բառ բացատրելը, իսկ եթե այն գործածվի բառակապակցության կամ նախադասության մեջ, ապա ինչ որ չափով ավելի հասկանալի կդառնա:

Եթե առանձին ներկայացվի *ճակատ* բառը և բառակապակցությամբ՝ օրինակ՝. մարդու *ճակատի* նշանը, *ճակատում* կովել, թերթի *ճակատին* գրել, կպարզվի, որ երկրորդ տարբերակով ավելի հեշտ են հասկանում համանունությունը և ճիշտ բացատրում դրանց իմաստը:

Կամ՝ *մարդում* և *մարդում* կատարել, Տավուշի *մարդում*, հաճույքով *մարզվել*,

• *նորահաս* և *նորահաս* միտք, *նորահաս* ուղևորներ:

Համանունների բացատրությունը խիստ կարևոր է նախ՝ սովորողների բառապաշարը հարստացնելու, ապա՝ նրանց ձեռք բերած գիտելիքները տվյալ թեմայից խորացնելու առումով: Հանրահայտ փաստ է, որ աշակերտը, քանի դեռ չգիտի բառի բացատրությունը, կոժվարանա մյուս հարցերում՝ թե՛ ուղղագրության, թե՛ ուղղախոսության, թե՛ քերականության առումով:

Ծատ հաճախ աշակերտները բազմիմաստությունը շփոթում են համանունության հետ՝ հաշվի առնելով, որ երկուսն էլ գրեթե գրությամբ նույնն են, նշանակությամբ՝ տարբեր: Այդ նրբությունը պետք է այնպես համոզիչ և հստակ բացատրել, որ աշակերտները ճիշտ ըմբռեն:

Հայերենում համանունների մի մասը առաջացել է բառի բազմիմաստության շնորհիվ: Հենց այս հանգամանքն էլ հիմք է տալիս աշակերտներին՝ երբեմն շփոթելու բազմիմաստությունը համանունության հետ: Դրանց միջև հստակություն մտցնելու, ավելի ընկալելի դարձնելու համար ուսուցիչը պետք է, 6-րդ դասարանի մակարդակը հաշվի առնելով, դյուրընկալելի, ոչ շատ խորացված բացատրի դրանց տարբերությունները: Բազմիմաստ բառերի մեջ կարող է տեղի ունենալ ինչպես իմաստների ներքին փոփոխություն, այնպես էլ նոր իմաստի կամ իմաստների զարգացում: «Բազմիմաստ բառերը մեկից ավելի իմաստներ են արտահայտում՝ կազմվելով մի դաշտ, որտեղ և դրանք շղթայակցվում են իրար և ամբողջություն կազմում: Համանուն բառերի իմաստները ժամանակի ընթացքում աստիճանաբար այնքան են հեռանում տվյալ անվանական, նախնական իմաստից, որ խզում է առաջանում իմաստների միջև, և դրանք իրար հետ կապող ոչ մի օղակ, նախորդից բխելու ոչ մի նշույլ չի մնում: Այդ նոր իմաստն այնքան է հեռանում իրեն ծնող բառից, որ նույն հնչյունական կազմով այդ միավորը գիտակցվում է իբրև ինքնուրույն, անկախ, տարբեր բառ»: (2, 120)

Թեմայի նման բացատրությունը հնարավոր է, որ ոչ բոլորին հասանելի լինի՝ դասարանում գոյություն ունեցող եռամակարդակի պատճառով: Եվ քանի որ նոր կրթակարգի համաձայն, սովորողներին ներկայացվող պարտադիր պահանջները տրվում են եռամակարդակ ուսուցմամբ, այդ բացատրությունը կարելի է էլ ավելի պարզեցնել: Այսպես՝ բերել օրինակներ բազմիմաստ և համանուն բառերից: Գրատախտակին գրել *միտք* բառի մի քանի իմաստները: *Միտք* - 1. Մտածելու՝ դատելու հատկություն: 2. Մտածմունք: 3. Դատողություն, խորհրդածություն: 4. Գաղափար, կարծիք, վարկած: 5. Դիտավորություն, դիտում: 6. Նպատակ: 7. Նշանակություն, իմաստ: 8. Հիշողություն: 9. Ուշադրություն:

Ըսր - 1. Լեռնային ապար: 2. Լեռնապարի առանձին բեկոր: 3. Ակ, թանկագին քար: 4. Ծիրմաքար, գերեզման: 5. Լեռ, սար, ժայռ: 6. Կշռաքար: 7. Փխբ. ճնշող՝ ծանր ներգործություն ունեցող հանգամանք՝ զգացմունք, ծանրություն: 8. ամ. կարծր, պինդ:

1. *Գանձ* - թանկագին իրերի ամբողջություն:

• *Գանձ* - խաղողի վազի արմատների վերևի թելերի փնջերը:

- *Գանձ* - պատարագի վերջում երգվող կրոնական երգ:

2. Որդի - արու գավակ:

- *Որդի* - որդ գոյականի եգ. սեռականի հոլովածը:

Աշակերտների ուշադրությունը հրավիրելով գրատախտակին՝ բացատրել, որ *միտք* և *քար* բառերի արտահայտած իմաստներն ընդհանրական են, այսինքն՝ դրանց միջև ընդհանրական և իմաստային կապ գոյություն ունի: Իսկ *գանձ* և *որդի* բառերում ոչ մի ընդհանուր և իմաստային կապ չկա, ինչպես երևում է օրինակներից, գանձ-ը երեք տարբեր, իրար հետ կապ չունեցող իմաստներ է արտահայտում, իսկ որդի-ն՝ երկու:

Հարկ է նշել նաև համանունների առաջացման ուղիներից առավել գործածականը:

Այսպես՝ համանուններ են առաջանում.

1) Փոխառյալ հայերեն բառերով.

- *կույս* (չամուսնացած աղջիկ), *կույս* (կողմ),
- *այր* (տղամարդ), *այր* (քարանձավ):

2) Հայերենի ուղղագրության փոփոխման հետևանքով.

- *սեր* (սերուցք),
- *սեր* (գրք. սեր, զգացմունք):

3) Հայերեն և փոխառյալ բառերի հնչյունական կազմի նմանության հետևանքով.

- *շինել* (կառուցել),
- *շինել* (ռուս զինվորականի վերարկու):

4) Բառակազմական ճանապարհով.

ա) բառաբարդման.

- *լեռնապար* (լեռնային պար),
- *լեռնապար* (լեռնաշղթա),
- *թթվասեր* (թթու սիրող),
- *թթվասեր* (կաթնամթերք):

բ) Ածանցման.

- *աղոտ* (աղով պատված),
- *աղոտ* (անորոշ, ոչ պարզ):

5) Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների նմանությամբ.

- *հոն* (պտուղ), *հոն* (այնտեղ):

6) Հասարակ և հատուկ անուններով.

- *գոհար* (թանկագին քար), *Գոհար* (իգ.անուն):

7) Գրական և բարբառային բառերի պատահական նմանությամբ.

անհեր (անմազ), *անհեր* (բարբառ.՝անհայր): (2, 120)

Թեման ավելի շատ գործնական բնույթ է կրում, հետևապես՝ ուսուցիչը պետք է կազմի տարաբնույթ վարժություններ՝ տեսականը գործնականորեն կիրառելու համար: Մինչդեռ միայն այս մասին չէ, որ պետք է հոգ տանի ուսուցիչը. թեմայի մատչելի բացատրությունը թերևս չի ապահովում աշակերտի բառապաշարի հարստացման հարցը: Խնդիրն էլ հենց այն է, թե ինչպես, ինչ ուղիներ փնտրել զարգացնելու աշակերտի գրավոր և բանավոր խոսքը, բառապաշարը, կապակցված խոսք կազմելու ունակությունը՝ չանտեսելով անցնելիք նյութը:

Բառապաշարի հարստացման միջոցները բազմազան են: Ծրագրային յուրաքանչյուր նյութին համապատասխան՝ ուսուցիչը պետք է կատարի խոսքի զարգացմանը նպատակաուղղված տարբեր աշխատանքներ: Որպեսզի փոքրիշատե պարզ պատկերացում կազմվի այն մասին, թե ինչ նշանակություն ունի համանունների օգտագործումը խոսքի մեջ բառապաշարի հարստացման գործում, վերլուծենք հետևյալ համանունները:

- *Աղեղ* - թանկագին քարի մի տեսակ, սարդիոն,
- *աղեղ* - բուրդ կամ բամբակ զգնլու գործիք,
- *աղեղ* - նետ արձակելու կամարածև գործիք:
- *Մատ* - բլուր,
- *մատ* - մարդու և որոշ կենդանիների մարմնի մաս,
- *մատ* - շախմատում՝ պարտություն:

Նշված համանուններից, ըստ իս, աշակերտներին ծանոթ է միայն վերջին բացատրությունը, բայց ահա այս վերլուծությունը կօգնի աշակերտներին՝ բնագրում հանդիպած

արտահայտություններն ավելի ճիշտ ըմբռնելու և, սեփական խոսքը հարստացնելու: Այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքներին ավելի լայն թափ տալու համար ուսուցիչը չպետք է սահմանափակվի միայն դասագրքի ընձեռնած հնարավորություններով: Ուսուցչի աչքից չպետք է վրիպի ոչ մի անծանոթ բառ: Վերջիններս պետք է մատչելիորեն պարզաբանվեն, ենթարկվեն վերլուծության: Անվիճելի փաստ է, որ միայն աշակերտների համար հասկանալի, ծանոթ բառերը մուտք կգործեն նրանց բառապաշարը և կդառնան ամենօրյա գործածական բառեր:

Ուրեմն՝ ինչպիսի աշխատանքներ կազմակերպել սովորողների բառապաշարը համաճարմունքով հարստացնելու ուղղությամբ: Ուսուցիչը պետք է ծանոթության կարգով տեղեկացնի առկա համաճարմունքների բառարանների մասին, օգնի օգտվելու դրանցից: Ավելի գործնական և արդյունարար կստացվի, եթե մեկ դասաժամ ուսուցչի օգնությամբ աշակերտներն աշխատեն բառարաններով: Պետք է հետամուտ լինել, որ նրանք ևս բառատնտրներ պահեն, հարկ եղած դեպքում նշումներ անեն:

Փորձենք հնարավորինս ընկալելի ներկայացնել գործնական բնույթի մի շարք առաջադրանքներ:

ա) Բառարանից դուրս գրել համաճարմունքների շարքեր՝ ըստ խոսքի մասերի պատկանելության: Բայց քանի որ 6-րդ դասարանցիները չեն ուսումնասիրել հայերենի բոլոր խոսքի մասերը, նշել՝ առարկա, հատկանիշ, գործողություն ցույց տվող բառեր:*

բ) Բառարանից գտնել երկանդամ, եռանդամ, քառանդամ համաճարմունքներ և գործածել նախադասությունների մեջ:

գ) Կազմել փոքրիկ տեքստ տրված համաճարմունքով (նշել համաճարմունքներ):

դ) Համաճարմունքով կազմել բառակապակցություններ կամ նախադասություններ և պահանջել՝ բացատրել դրանց իմաստները:

Օրինակ՝

- ջրի *ակ*, մատանու *ակ*, մեքենայի *ակ*,
- թանկարժեք *լալ*, աղեկտուր *լալ*, *լալ* մարդ,
- *հարկ* չկա, երկու *հարկ* բարձրանալ, ապրել մեկ *հարկի* տակ, *հարկ* վճարել,
- *տոն* է մեզ համար, վատ *տոնով* խոսել, բարձր *տոնով* երգել,
- առավոտյան *ցող* դնել, արևի *ցողը*, երևաց ծաղկի *ցողը*,
- մի *պահ* քարանալ, ճյուղը պահ *տալ* հողին, *պահ*, այս ինչ կատարվեց,
- դժվար *խնդիր*, մերժել *խնդիրը*, ուղիղ *խնդիր*:

Որպես տնային աշխատանք առաջադրել համաճարմունքներ և պահանջել, օգտվելով բառարանից, գրել դրանց իմաստները:

Քանի որ համաճարմունքներ թեմային ծրագրով հատկացված է ընդամենը երկու դասաժամ, ակնհայտ է, որ այդ ժամաքանակը չի բավարարի լայնածավալ աշխատանք կատարելու, ուստի ուսուցիչը պետք է գրականության ժամերին նույնպես նմանատիպ աշխատանք կատարի: Այսպես՝ գրականությունից վերոնշյալ թեմային զուգահեռաբար անցնում են Լեոնարդո դա Վինչիի «Որդիական երախտագիտություն» ստեղծագործությունը: Կարելի է խաղ-մրցույթ կազմակերպել: Տեքստից գտնել այն բառերը, որոնք համաճարմունքներ ունեն՝ նշելով յուրաքանչյուրի իմաստը: Այդ համաճարմունքներով նախադասություններ կազմել: Թվով ավելի շատ համաճարմունքներ գտնողին խրախուսել կամ գնահատել: Աշակերտներին ավելի շահագրգռելու համար կարելի է աստիճանաբար առաջարկել առավել բարդ առաջադրանքներ էլի նույն պահանջով՝ այս անգամ միայն մի պարբերությունից:

Այս խաղ-մրցույթի ժամանակ նպատակահարմար է օգտագործել բառարաններ: Վերջում դուրս գրած համաճարմունքներով զանազան աշխատանքներ կարելի է կատարել՝ ավելի հեշտ մտապահելու, խոսքում ճիշտ ու տեղին գործածելու համար:

Նույնատիպ առաջադրանքները նախ՝ աշակերտների մոտ շահագրգռվածություն են առաջացնում դասին պատրաստ և ակտիվ լինելու, հաղթող ճանաչվելու, մյուս կողմից՝ նրանց ուղղորդում են արագ կողմնորոշվելու, ինքնուրույն դատելու, գտնելու, եզրահանգումներ անելու, խոսք կառուցելու:

Աշակերտների ակտիվությունն էլ ավելի բարձրացնելու, նրանց ինքնուրույնությունն ու ինքնարտահայտումն առավելագույնս խթանելու նպատակով օգտակար է ստեղծել պրոբլեմային իրավիճակներ, առաջադրել այնպիսի սուր հարցեր, որ ստիպի նրանց մտածելու, և հարկադրված

*Կրտսեր դպրոցում հայերենի խոսքի մասերից տարրական գիտելիքներ են տրվում միայն գոյական, բայ, ածական և թվական անուններից:

լինեն կապակցված խոսք ասելու: Ի վերջո, խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման ուղղությամբ տարվող աշխատանքներն անհնար է պատկերացնել առանց բանավեճի, մտքերի փոխանակման, լեզվամտածողության, մեկնաբանությունների, ինչպես նաև՝ ընդօրինակման: Հիրավի, ուսուցչի գեղեցիկ, օրինակելի խոսքը, որի ազդեցության տակ են անընդհատ գտնվում աշակերտները, խոսքի զարգացման կարևոր գործոններից մեկն է:

«Ուսուցչի խոսքը պետք է լինի գրական, բայց ոչ գրքային, կենդանի, բայց ոչ բարբառային, պարզ, բայց ոչ պարզունակ, գեղեցիկ, բայց ոչ զարդարուն: Կարճ ասած՝ ուսուցչի խոսքը պետք է լինի գեղեցիկ ու գրավիչ, գրական խոսքի կենդանի օրինակ: Այն պետք է լինի առինքնող, նրանով աշակերտը պետք է սիրի իր մայրենի գրական լեզուն», - գրում է Ս. Աբրահամյանը: (3, 30)

Աշակերտների խոսքի զարգացման հարցում մեծ նշանակություն ունեն միջառարկայական կապերը, մասնավորապես՝ գրականությունը: Կարելի է գրականությունն անցնելիս կապ ստեղծել երկու թեմաների միջև, ասենք՝ ընթերցելու ժամանակ թվարկել տեքստում գործածված համանունները, տալ դրանց բացատրությունները: Թեկուզ այդ մասին անդրադարձ չի կատարվում առաջադրանքներում, բայց, այնուամենայնիվ, ուսուցիչը կարող է գոնե մի քանի բովանդակ հատկացնել հենց համանուններից աշխատանքներ կատարելուն:

Փորձենք գրականության դասի մի հատվածից դուրս գրել բառեր, որոնք ունեն համանուններ:

Մի անգամ՝ առավոտյան, երկու ծերացած հոգաբաններ՝ վարուժան ու մարի, զգացին, որ արդեն ի վիճակի չեն բնից թռչել-հեռանալու: Փառակալած աչքերով այլևս անկարող էին տեսնել արևի լույսը, թեև երկինքը պարզ էր, և սպասվում էր պայծառ եղանակ: Երկուսն էլ տեսնում էին լոկ ծխավուն պղտորություն ու շուրջբոլորն ուրիշ ոչինչ չէին ջոկում: Նրանք զառամ էին ու անկար: Թևերի ու պոչի փետուրները փայլատվել և կոտրտվում էին: Ուժերը հատնելու վրա էին: (1, 76)

- *վարուժան* - տղամարդու անուն, *վարուժան* - արու թռչուն,
- *մարի* - էգ թռչուն, *մարի* - մայրիկ, *մարի* - մարիագի, *մարի* - մարել բայի ըղձ. ապ. եղ. 3-րդ ու ժխտ. դերբայը,
- *անկար* - անկարող, *անկար* - անկարիք, *անկար* - չկարված,
- *լոկ* - սոսկ, սովորական, *լոկ* - անյուտ, անսնունդ, *լոկ* - լորտու,
- *եղանակ* - կերպ, ձև, *եղանակ* - կլիմայական պայմանները, *եղանակ* - մեղեդի,
- *ջոկում* - ջոկ գոյականի եզ. ներգ. հոլովածևը, *ջոկում* - ջոկել բայի անկատար ձևաբայը,
- *պարզ* - մաքուր, պայծառ, *պարզ* - պարզակ, ծարավ:

Ուսուցիչը պետք է մեթոդապես ճիշտ իրականացնի նյութի մատուցումը և միշտ հիշի, որ իր առաքելությունը կրթօջախում մայրենի լեզվի դասընթացի միջոցով աշակերտի գիտակցությանը ոչ միայն այս կամ այն թեման որպես լեզվական երևույթ ներկայացնելն է, այլև նրանց խոսքի մշակույթը, բառապաշարը, հարստացնելն ու զարգացնելը, որի իրագործման համար էլ պետք է հնարավորինս մշակել վարժությունների ու առաջադրանքների ամբողջական համակարգ:

Միջին դպրոցի 6-րդ դասարանում ձեռք բերած գիտելիքների պակասը լրացվում, խորացվում և ամոզացվում է ավագ դպրոցի 10-րդ դասարանում: Պետք է հիշեցնել, որ համանունները նրանց համար անծանոթ թեմա չէ, նախորդ դասարաններում դրան անդրադարձել են երկու անգամ, հետևապես նյութի ավելի խոր յուրացումը պետք է կատարվի՝ հիմք ընդունելով ունեցած գիտելիքները: Կարևոր է նշել նաև այն փաստը, որ մի քանի անգամ անդրադառնալով նույն թեմային, ոչ թե այն կրկնում են նույնությամբ, այլ, ելնելով դիդակտիկայի սկզբունքներից, մանկավարժական դրույթներից, ուսուցումը տարվում է հեշտից դժվար, պարզից բարդ, ծանոթից անծանոթ սկզբունքով, այդ իսկ պատճառով թեման գնալով տարեցտարի աստիճանաբար բարդանում, խորացվում է՝ բացահայտելով նոր օրինաչափություններ ու նրբություններ: Եվ քանի որ աշակերտները քաջատեղյակ են համանուններին, ուսուցիչը կարող է նրանց մասնակից դարձնել նոր նյութի հաղորդմանը, օգնել՝ վերհիշելու 6-րդ դասարանում անցածը, բերելու ինքնուրույն օրինակներ, եզրահանգելու

և ձևակերպելու սահմանումը: Այս նախապատրաստական աշխատանքը բարենաջող կատարելուց հետո, երբ աշակերտներն արդեն պատրաստ են ավելին ընկալելու, ուսուցանում է համանունները, բայց այս անգամ արդեն 10-րդ դասարանի ծրագրի մակարդակով և պահանջով: Նորը համանունների տեսակների ուսուցումն է: Դասագրքում տրվում է համանունների հետևյալ տեսակները՝ ա) բառային, բառաքերականական, քերականական, բ) լիակատար և մասնակի, գ) բուն, նույնահունչ, նույնագիր: Օրինակների միջոցով բացատրվում է յուրաքանչյուր տեսակ: (4, 70)

Աշակերտների նախապես բերած օրինակներով էլ կարելի է այն բացատրել: Ուսուցիչը պետք է նշված օրինակները խմբավորի և ըստ այդմ էլ ներկայացնի համանունների տեսակները՝ համալրելով այն օրինակներով ու բացատրություններով: Ավելի նպատակահարմար է գրքում նշված օրինակներին ավելացնել նորանոր բառեր՝ ունենալով բառապաշարն էլ ավելի ընդլայնելու նպատակով:

Այսպիսով՝ համանունների ուսուցումը նպաստում է ինչպես աշակերտների լեզվական գիտելիքների, այնպես էլ նրանց բառապաշարի հարստացմանը, խոսքը նորածանոթ բառերով ու արտահայտություններով համալրելուն:

Ծանոթագրություններ

1. Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Ալեքսանյան Թ., Մայրենի 6, Եր., 2007:
2. Սուրիապյան Ա.Մ., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999:
3. Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1984, N 3:
4. Եզնկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետյան Ռ., Հայոց լեզու 10-րդ դասարանի համար, Մակմիլան-Արմենիա, 2009:

Գրականություն

1. Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:
2. Գյուրջուդադյան Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Եր., 1987:
3. Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Ալեքսանյան Թ., Մայրենի 6, Եր., 2007:
4. Գևորգյան Ե., Հայոց լեզվի համանունների բառարան, Եր., 1978:
5. Եզնկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետյան Ռ., Հայոց լեզու 10-րդ դասարանի համար, Մակմիլան-Արմենիա, 2009:
6. Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1984, N 3:
7. Սուրիապյան Ա.Մ., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999:

Резюме

Обучение учащихся различать омонимы, формировать умение использовать их в устной и письменной речи, является одной из главных задач учителей по родному языку в младших и в старших школах. Развивать умение учащихся находить омонимы в художественном тексте и в словаре, способствует пополнения словарного запаса и к развитию навыков работы с текстом.

В школах изучают омонимы в 6-х и в 10-х классах, в остальных классах путем практических работ пополняют словарный запас, и для каждого класса учитель использует соответствующие методы обучения. Это обстоятельство определило в программе обучения своеобразный характер упражнений, в младших классах - от очень простых, в старших классах - до сравнительно трудных.